

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Օրակարգ.

1. Դոկտորական ատենախոսության թեմայի քննարկում և հաստատում
2. Ասպիրանտների ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը
3. Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի առարկայական ծրագրերի վերանայման արդյունքների քննարկում
4. «Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքի պրակտիկան ՀՀ-ում. արդի զարգացումները» գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածուի հրատարակման երաշխավորում
5. Ուսանողների կողմից դասախոսների գնահատման կիսամյակային հարցումների արդյունքների քննարկում:
6. ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հետ համատեղ Սոցիոլոգիայի ֆակուլտետում <<Կանայք, առաջնորդություն և զարգացում>> նոր մագիստրոսական ծրագրի որակի գնահատման նպատակով ստեղծված մասնագիտական փորձաքննական հանձնաժողովի եզրակացությունը:

**Լսեցին** 1. Հայցորդ Վարդգես Պողոսյանի դիմումի հիման վրա իր դոկտորական ատենախոսության թեմայի քննարկման և հաստատման հարցը

**Ելույթ ունեցան՝** Ա. Ե. Մկրտիչյանը, Ա. Կ. Խաչատրյանը, Ա.Կ.Սահակյանը, Ա. Վ. Աթանեսյանը

**Որոշեցին.** Հայցորդ Վարդգես Պողոսյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել «Արդիականացման ամբիվալենտությունը. պատմասոցիոլոգիական հայեցակարգման փորձ», գիտական խորհրդատու ` փ.գ.դ. պրոֆեսոր Ա.Ե. Մկրտիչյան:

**Լսեցին** 2. Ասպիրանտների ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը

**Ելույթ ունեցան՝** Ա. Ե. Մկրտիչյանը, Հ. Է. Գևորգյանը, Ա. Կ. Խաչատրյանը, Ա. Կ. Սահակյանը, Ա. Վ. Աթանեսյանը

**Որոշեցին 1.** Կիրառական սոցիոլոգիայի ասպիրանտ Գայանե Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել «Սոցիալական շարժումների առանձնահատկություններն արդի հայաստանյան հասարակությունում (սոցիոլոգիական վերլուծություն)»

**Որոշեցին 2.** Սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի պատմության և տեսության ամբիոնի հեռակա ասպիրանտ Ասյա Թադևոսյանի ատենախոսության թեման հաստատել «Սփյուռքահայ ինքնության սոցիոլոգիական հայեցակարգման հիմնախնդիրները », գիտական ղեկավար՝ փ.գ.դ. պրոֆեսոր Ա.Ե. Մկրտիչյան:

**Լսեցին 3.** Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի առարկայական ծրագրերի վերանայման արդյունքների քննարկում

**Ելույթ ունեցան՝** Ա. Կ. Խաչատրյանը, Ա. Ե. Մկրտիչյանը, Հ.Է. Գևորգյան

**Որոշեցին.** Հաստատել Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի առարկայական ծրագրերի քննարկման արդյունքները:

**Լսեցին 4.** «Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքի պրակտիկան ՀՀ-ում. արդի զարգացումները» գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածուի հրատարակման երաշխավորում

**Ելույթ ունեցան՝** Ա. Ե. Մկրտիչյանը, Ա. Կ. Խաչատրյանը, Ա.Կ.Սահակյանը, Ա. Վ. Աթանեսյանը

**Որոշեցին.** Հրատարակման երաշխավորել «Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքի պրակտիկան ՀՀ-ում. արդի զարգացումները» գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածուն:

**Լսեցին 5.**

Ուսանողների կողմից դասախոսների գնահատման կիսամյակային հարցումների արդյունքների քննարկում:

**Ելույթ ունեցան՝** Ա. Մկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա.Սահակյանը, Եվ.Վարդանյանը:

**Որոշեցին.** Հաշվի առնել հարցման արդյունքները հաջորդ ուստարվա ծանրաբեռնվածությունների և հավելյալ աշխատավարձերի հաշվարկման ժամանակ:

**Լսեցին 6.** ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հետ համատեղ Սոցիոլոգիայի ֆակուլտետում <<Կանայք, առաջնորդություն և զարգացում>> նոր մագիստրոսական ծրագրի որակի գնահատման նպատակով ստեղծված մասնագիտական փորձաքննական հանձնաժողովի եզրակացությունը:

**Ելույթ ունեցան՝** Ա. Ե. Մկրտիչյանը, Ա. Վ. Աթանեսյանը, Ս. Վ. Աստվածատուրովը, Հ. Գևորգյանը, Ա. Վարտիկյանը:

**Որոշեցին.** Հաշվի առնելով ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հետ համատեղ Սոցիոլոգիայի ֆակուլտետում <<Կանայք, առաջնորդություն և զարգացում>> նոր մագիստրոսական ծրագրի վերաբերյալ մասնագիտական փորձաքննական հանձնաժողովի եզրակացությունը՝ միջնորդել ծրագրի հաստատման որոշումը:

Նախագահ՝

Ա. Ե. Մկրտիչյան

Քարտուղար՝

Ա. Վ. Աթանեսյա